# ՔՐԴԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՔԵՄԱԼԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ 1920-1930-ԱԿԱՆ ԹԹ.

ՍԱՅԻՅԱՆ Ա. Ս.

Շեյխ Սայիդի ապստամբության պարտությունից հետո թուրքական կառավարությունը, բացի զինվորական գործողություններից, ձեռնարկում էր նաև վարչական-օրենսդրական միջոցառումներ՝ քրդական շարժումը ճնշելու համար: Այսպես, 1926 թ. մայիսի 31-ին Թուրքիայի ազգային մեծ ժողովը (այսուհետև՝ ԹԱՄԺ) ընդունեց N 855 օրենքը՝ տեղաբնակեցման մասին, ըստ որի, երկրի նոսր բնակեցված վայրեր էին տեղափոխվում քոչվոր ցեղերը և սահմանամերձ գյուղերի բնակչությունը: Ղեկավարվելով այս հոդվածով՝ թուրքական իշխանությունները 1926-1927 թթ. երկրի խորքերը տեղափոխեցին մոտ մեկ միլիոն քուրդ[1]: Դրա հետ մեկտեղ, թուրքական իշխանությունները ստիպված էին որոշ չափով մեղմել իրենց քաղաքականությունը: Ճիշտ է՝ ԹԱՄԺ-ն 1927 թ. մարտի 2-ին լրացումներ կատարեց հասարակական կարգի պահպանման մասին օրենքում՝ արևելյան վիլայեթներում պաշարողական դրությունը երկարաձգելով մինչև 1929 թ. մարտի 4-ը, սակայն չերկարացրեց անկախութ-յան դատարանների լիազորությունները, որոնց ժամկետը վերջանում էր 1927 թ. մարտի 7-ին, իսկ նրանց գործառույթները, ինչպես նաև վարույթում գտնվող կիսատ գործերը փոխանցվեցին սովորական դատարաններին[2]: Այս որոշակի մեղմացումը բացատրվում է երկու պատճառով.1) թուրքական իշխանությունները վախենում էին քրդերի ավելի հզոր ելույթներից, 2) արտասահմանյան երկրների հետ տնտեսական կապերը թուլացել էին՝ ռազմական դրության և անկախության դատարանների առկայության պատճառով: Սակայն իրավիճակը չփոխվեց անգամ արևելյան վիլայեթներում արտակարգ դրությունը մինչև 1929 թ. մարտի 4-ը երկարաձգելու մասին օրենքի գործադրումից հրաժարվելու և Էլյազիգ, Ուրֆա, Բիթլիս, Հաքյարի, Դիարբեքիր, Սղերդ, Մարդին և Վան վիլայեթները առաջին գեներալ-տեսչության մեջ մտցնելու հետևանքով: Չնայած գեներալ-տեսուչը լիազորված էր շատ մեծ իշխանությամբ, սակայն նրան չհաջողվեց փոխել դրությունը: Առաջին գեներալ-տեսուչ նշանակվեց Իբրահիմ Թալի բեյը, որի նստավայրն էր Դիարբեքիրը[3]: Ուշքի գալով թուրքական զորքերի հարվածներից՝ քրդերը շեյխ Սայիդի ապստամբության ճնշումից ընդամենը երեք ամիս հետո կրկին ապստամբություններ բարձրացրին: Դրանցից էր, օրինակ՝ Սեյիդ Աբդուլլահի ապստամբությունը՝ Հաքյարիում 1925 թ. հունիս-հուլիս ամիսներին. այն ճնշվեց երրորդ բանակի ստորաբաժանումների կողմից:

1926 թ. հունիս-հուլիս ամիսներին Վանա լճի մոտ 6 հարյուր քուրդ յոթ ժամ կռվում էին թուրքական զորքերի դեմ: Իսկ Ջուլամերիկում

---

[1] **Никитин В.**, *Курды, М., 1964, с. 90.*
[2] **Гасратян М. А.**, *Курды Турции в новейшее время, Е., 1990, с. 128.*
[3] *История Курдистана, М., 1999, с. 301.*

ապստամբները գերի վերցրին նահանգապետին, ինչպես նաև գրավեցին մեծ քանակությամբ ռազմամթերք: Նրանց հաջողվեց պարտության մատ-նել Սուլեյման Սաբրի բեյի գլխավորած՝ տեղի թուրքական զորամասե-րին[4]: 1926 թ, աշնանը ջելալի, հասանան, ջիբրան և հայդարան ցեղերը բարձրացան Արարատ լեռը և ջելալիների առաջնորդ Բերխոյի, Իհսան Նուրի փաշայի և Հըսգե Թելլիի գլխավորությամբ ապստամբություն բարձրացրեցին: Սկզբնական շրջանում նրանք մոտ 200 հոգի էին, սակայն հետագայում ապստամբների թիվը ավելացավ՝ ի հաշիվ այլ ցեղերի:

Քրդերի դիմադրությանը կազմակերպված բնույթ հաղորդելու և դավաճանության դեպքերը կանխելու համար 1927 թ. օգոստոսին Լիբանանում, գաղտնի պայմաններում, տեղի ունեցավ քրդական քաղաքական կազմակերպությունների՝ Քուրդիստանի վերածնության ընկերության, Քրդական ազգային կուսակցության, Քուրդիստանի անկախության կոմիտեի, ինչպես նաև ազդեցիկ ցեղապետերի և հայտնի մտավորականների ժողովը, որոնց հիմքի վրա ստեղծվեց «Հոյբուն» քաղաքական կազմակերպությունը: «Հոյբունի» առաջին իսկ որոշումներն ուղղված էին շեյխ Սայիդի ապստամբության պարտությունից հետո Ճապաղջուրի, Սասունի և Արարատի շրջաններում թուրքական զորքերի դեմ մարտնչող ցաքուցրիվ քրդական ջոկատները միավորելուն, զինամթերքով և փորձառու սպաներով համալրելուն, որպեսզի նրանց պայքարն ավելի արդյունավետ դառնա: Մինչ այդ՝ 1927 թ. գարնանը, Արարատի և նրան հարող Բայազետի շրջաններում ապստամբները պարտության էին մատնել թուրքական զորամասերին՝ ոչնչացնելով 2 հազար զինվոր ու սպա, գերելով չորս հարյուրին, խլելով 12 հրանոթ, 36 գնդացիր[5]: «Հոյբունը» 1927 թ. սեպտեմբերին Արարատ ուղարկեց Իհսան Նուրի փաշային, որին հաջողվեց միավո-րել ուժերը՝ Իբրահիմ Հըսգե Թելլիի ղեկավարությամբ, ինչպես նաև ստեղծել քրդական պետության հիմքերը՝ Արարատ նահանգի վարչակազմը, որը ղեկավարեց Իբրահիմ Հըսգեն: Իհսան Նուրին վերակազմավորեց զինված ուժերը՝ պարտիզանական կռիվների համար: Զինվորների մեջ կարգապահությունը խստացնելու նպատակով նա ձեռնարկեց մի շարք միջոցառումներ. 1) գողության, թալանի, բռնաբարության համար սահմանվում է մահապատիժ, 2) ապստամբության շրջանից դուրս ոչ ոք իրավունք չունի զբաղվելու ավազակությամբ և թալանով, 3) նշված հանցագործությունների հեղինակները դատվում են ապստամբական դատարանով՝ ձայների մեծամասնությամբ:

1927 թ. աշնանը ապստամբները ջախջախեցին Բայազետի կայազորը, գերի վերցրին 10 սպա, 45 զինվոր[6]: Թուրքերը սկզբնական շրջանում փորձում էին ապստամբությունը մարել՝ համոզելով, անգամ Իհսան Նուրի փաշային խոստանալով բարձր հրամանատարական պաշտոն թուրքական բանակում, ինչպես նաև ջանում էին իրար կամ Իհսան Նուրի փաշայի դեմ լարել ցեղապետերին, սակայն՝ անհաջող: Ավելին՝ 1928-1929 թթ. Արա-

[4] **Гасратян М. А.,** նշվ. աշխ., էջ 272:
[5] **Սասունի Կ.,** Քյուրտ ազգային շարժումները և հայ-քրտական հարաբերություն-ները, Պեյրութ, 1963, էջ 109:
[6] **Никитин В.,** նշվ. աշխ., էջ 102:

բատի ապստամբության ղեկավարները 15-20 հոգանոց դիվերսիոն խմբեր էին ուղարկում Վան, Մուշ, Խնուս, Կարս, Կաղզվան և այլ վայրեր, որոնք հարձակվում էին ոստիկանական պահակակետերի, զինվորական ստորաբաժանումների և պետական հիմնարկների վրա[7]:

1930 թ. սկզբին Թուրքիայի հյուսիս-արևելյան վիլայեթների մեծ մասը գտնվում էր ապստամբների ազդեցության ոլորտում: Այս պայմաններում քեմալական կառավարությունը ստիպված էր ապստամբների դեմ ուղարկել տեխնիկապես լավ հագեցած պատժիչ ջոկատ: Սակայն 1930 թ. ապրիլի 6-ին այն պարտություն կրեց քրդերից և մեծ կորուստներով նահանջեց: Բայց դա չկանգնեցրեց թուրքական կառավարությանը: Ընդհակառակը՝ Սալիհ փաշայի հրամանատարությամբ 40 հազարանոց զորաբանակ ուղարկվեց, որի մեջ կային 10 հրետանային բրիգադ, 550 գնդացիր և 50 ինքնաթիռ: Մոտ մեկ ամիս տևած ճակատամարտում թուրքերը նոր պարտություն կրեցին՝ տալով մի քանի հազար սպանված, 2000 գերի, 60 գնդացիր, 24 թնդանոթ: Խփվել էր 12 ինքնաթիռ[8]: Սակայն համալրումներ ստանալով՝ թուրքական զորքերը քրդերին հետ մղեցին դեպի Մասիսի թամբարդը: Թուրքերին մեծապես աջակցեցին խորհրդային իշխանությունները, որոնք նյութական օգնություն էին ցույց տալիս, իսկ 1930 թ. օգոստոսին խորհրդային զինված ուժերը, անցնելով Արաքսը, թուրքական զորքերի հետ համատեղ հարվածներ հասցրեցին քուրդ ապստամբներին[9]: Ավելին՝ խորհրդային և թուրքական դիվանագիտության ջանքերի շնորհիվ Իրանը, որը, չնայած դեմ էր նման քայլերին, քանզի վերջնականորեն չէր գծվել թուրք-իրանական սահմանը, ստիպված թույլատրեց, որ թուրքական զորքերն անցնեն իր սահմանը և Իրանի տարածքից շրջապատեն քրդերին: Սակայն այդ ժամանակ Իրանում ապստամբած քրդական շիքաք ցեղի առաջնորդ Իսմայիլ աղա Սմկոն թուրքերին սպառնաց թիկունքից: Թուրքերն իրենք ընկան շրջապատման մեջ և ստիպված էին հետ քաշվել: Չնայած դրան, սեպտեմբերի 5-ին թուրքական ուժերն անցան վճռական հարձակման: Մի շարք վայրերում քրդերին հաջողվեց հետ մղել թուրքերի հարձակումը, սակայն չդիմանալով հակառակորդի գերակշիռ ուժերի ճնշմանը՝ նրանք ցրվեցին Արարատի լանջերին և շրջակա վիլայեթներում: Իհսան Նուրին իր կողմնակիցներով փախավ Իրան, իսկ Իբրահիմ Հրսգեն շարունակեց պայքարը և մարտերից մեկում զոհվեց: Ճնշելով Արարատի ապստամբությունը՝ Սալեհ փաշան 60 հազարանոց բանակով հարձակվեց Բաշկալայի, Սարայի, Բաղրիկալայի, Արճեշի, Պատնոցի, Վանի, Զիլյանի՝ ապստամբությամբ բռնկված շրջանների վրա, որտեղ կռվում էին 10000 քուրդ և նրանց պարտության մատնեց. թուրքերը կորցրեցին 2000 սպանված և 700 գերի: Դրանից հետո թուրքերը հաշվեհարդար տեսան գերի ընկածների և խաղաղ բնակչության հետ: Զիլանի դաշտում ոչնչացվեցին

[7] *История Курдистана, с. 306.*
[8] Гасратян М. А. , նշվ. աշխ., էջ 158:
[9] **Սասունի Կ.,** նշվ. աշխ., էջ 115:

1550[10], այլ տվյալներով՝ 5000[11] մարդ, Արճեշում վառվել էին 200 գյուղ, իսկ Պատնոցում բոլոր գյուղերն ավերվել էին:

Արարատի ապստամբության ժամանակ Դերսիմի քրդերը շարժվեցին նաև դեպի Երզնկա՝ Արարատի ապստամբներին օգնելու նպատակով: Թուրքերը, օգտագործելով առիթը, գեներալ-մայոր Ռյուշթու բեյի հրամանատարությամբ (10 հետևակային գումարտակ՝ 15 թնդանոթով) հարձակվեցին Աշգիրիկի, Դաշբեյի, Խարսի և Դանզիգի ուղղությամբ: Մար-տական գործողությունների մեջ ներգրավված էր 10 ինքնաթիռ: Տեղի ունեցած մարտերում թուրքերը ծանր կորուստներ կրեցին, բայց Ռյուշթու բեյին հաջողվեց իր կողմը գրավել Սայիդ Ռեզային թշնամի ցեղերին և նրանց օգնությամբ 1930 թ. հոկտեմբերի 26-ին գրավեց Դանզիգը, Դաշբեյը, Խարսը և Աշգիրիկը: Սակայն նույն օրն էլ դերսիմցիները, անցնելով հակահարձակման, գերեցին մի ողջ գումարտակ: 1930 թ. նոյեմբերի 7-ին Ռյուշթու բեյին միացավ Արարատից վերադարձած 3-րդ դիվիզիան՝ Խալիս փաշայի հրամանատարությամբ: Մեծաթիվ զոհերի գնով հաջողվեց գրավել և ավերել Գյուրկ գյուղը: Սակայն կորուստները և վերահաս ձմեռը ստիպեցին թողնել գրավված վայրերը և նահանջել[12]:

Այսպիսով, ավարտվեց քրդերի ապստամբության ևս մեկ փուլ: Ակնա-ռու էր քրդական քաղաքական մտքի զարգացումը: Ի տարբերություն «Ազադիի», «Հոյբունը» շատ ավելի իրատեսորեն էր պատկերացնում քաղաքական իրավիճակը: Այն, չնայած իր կազմակերպչական և գաղափարախոսական որոշ թերություններին, քաղաքական կուսակցություն էր, որի մեջ մեծ դեր էին խաղում մտավորականները: Նրանք չէին ձգտում խալիֆաթի և սուլթանաթի վերականգնմանը, չէին համագործակցում քե-մալականներին ընդդիմադիր ուժերի հետ: «Հոյբունը» մի քայլ առաջ էր քուրդ քաղաքական մտքի պատմության մեջ. ապացույցը նրա համագումարում Իրանի կառավարության և ժողովրդին ուղղված բարեկամական կոչերն ու ելույթներն էին, որտեղ շիա պարսիկներին անվանում էին ազգակից եղբայրներ: Կարևոր էին արտասահմանում «Հոյբունի» մասնաճյուղեր հիմնադրելն ու օտարերկրյա կառավարությունների ու կուսակցությունների հետ կապեր հաստատելը: Չնայած այստեղ «Հոյբունը» հաջողության չհասավ, և միակ ուժը, որ նրա հետ համագործակցեց, Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցությունն էր, սակայն դա էլ ձեռնըտու էր երկու կողմերի համար: ՀՅ Դաշնակցությունը միջոցներ էր հայթայթում ապստամբության համար, գաղափարապես և կազմակերպորեն հասունացնում էր «Հոյբունը», նպաստում՝ դառնալու ձևավորված քաղաքական կուսակցություն: ՀՅԴ-ն Արարատի ապստամբությանը աջակցելու և քրդերի կոտորածները դատապարտելու հարցը բարձրացրեց նաև 1923 թ. Չորրորդ ինտերնացիոնալում: 1925 թ. Մարսելում քրդա-կան հարցի վերաբերյալ միջազգային կոնգրեսում ՀՅ Դաշնակցությունը ներկայացրեց հռչակագիր[13]: «Հոյբունը», ի տարբերություն «Ազադիի»,

---

[10] *Курдский альманах, М., 2001, с. 12.*
[11] **Սասունի Կ.,** նշվ. աշխ., էջ 117:
[12] *История Курдистана, с. 309.*
[13] **Սասունի Կ.,** նշվ. աշխ., էջ 121:

ընդունում էր Արևմտյան Հայաստանի գոյության փաստը և հայ ժողովրդի իրավունքները՝ այդ հողերի նկատմամբ: Ապագա Քուրդիստանի և Հայաստանի սահմանները որոշելու էին երկու երկրների կառավարությունները: Սա «Հոյբունի» ղեկավարների սթափ, իրատեսական քաղաքական մտածողության մասին վկայող ևս մի ապացույց էր:

Արարատի ապստամբությունը ճնշելուց հետո թուրքական իշխանությունները շարունակեցին Քուրդիստանից և Արևմտյան Հայաստանից քրդերի տեղահանման քաղաքականությունը: Նրանց փոխարեն Բալկաններից բնակեցվում էին թուրք փախստականներ: 1934թ. մայիսին ԹԱՄԺ-ի կողմից ընդունված մի օրենքով, Թուրքիան բաժանվում էր երեք շրջանի. 1) թուրքական մշակույթի, 2) փախստական և վերաբնակիչ թուրքերի «շնորհիվ» թուրքական մշակույթի մեջ ինտեգրվող, 3) սանիտարական, տնտեսական, մշակութային, քաղաքական և ռազմական պատճառներով բնակչության տեղահանման ենթակա շրջան: Մեկ այլ օրենքով, թուրքական պետությունը չէր ճանաչում շեյխերի, աղաների, դերեբեյների և նույնիսկ ցեղերի՝ որպես իրավաբանական անձանց, իրավունքները, և նրանց անշարժ գույքը ենթակա էր օտարման: 1934 թ. հուլիսի 9-ի օրենքով, թուրքական կառավարությունը 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագրով Թուրքիային անցած շրջաններում (Օլթի, Սարիղամիշ, Կարս, Արդահան, Արարատ, Իգդիր, Սուրմալու), ինչպես նաև դրանց հարակից վիլայեթներում քրդերից խլված հողերը տրամադրեց թուրք վերաբնակիչներին, որոնց թիվը հասնում էր մոտ 630 հազարի[14]:

Քրդերը գրեթե 10 տարի տևած ապստամբություններից արյունաքամ էին եղել: Միակ շրջանը, որն ակտիվ դիմադրություն ցույց տվեց, Դերսիմն էր: Այն գտնվում էր Երզնկայից Դիարբեքիր և Սվազից Խարբերդ ընկած ճանապարհներին, շատ մոտ էր Էլյազիգին, և նրա ապստամբությունը կարող էր արևելյան վիլայեթները կտրել Թուրքիայից: Այդ պատճառով էլ նախորդ ապստամբությունների ժամանակ թուրքական իշխանությունները ամեն կերպ ջանում էին, որ Դերսիմը չմիանա ապստամբներին: Դերսիմը ճնշելու, դատարկելու և թուրքերով բնակեցնելու ուժային միջոցներին անցնելուց առաջ թուրքերը սկսեցին գաղափարապես հիմնավորել այդ քայլը՝ հայտարարելով, որ Դերսիմի զազա քրդերը հին թուրքերի հետնորդներ են, որոնք հնագույն ժամանակներում բարձրացել են լեռները, մոռացել իրենց լեզուն ու կտրվել թուրքական մշակույթից: Այդ պատճառով էլ Դերսիմի տարրական դպրոցներում ուսուցումը տարվում էր թուրքերենով, արգելվում էր տեղական տարազ հագնել, երգել մայրենի լեզվով և պարել: Ձեռնարկվեցին նաև տնտեսական բնույթի ճնշումներ, օրինակ՝ դերսիմցիները պետք է հարկ վճարեին պետությանը, իսկ ցեղերին պատկանող հողերը տրվում էին թուրք վերաբնակիչներին: Սակայն դերսիմցիներն իրենց առաջնորդ Սայիդ Ռեզայի գլխավորությամբ այնպիսի դիմադրություն ցույց տվեցին, որ թուրքական իշխանությունները սկզբնական շրջանում զերծ մնացին վճռական գործողություններից: Սակայն մյուս կողմից էլ թուրքական մամուլին արգելվեց որևէ տեղեկություն հաղորդել արևելյան վիլայեթների և մասնավորապես՝ Դերսիմի

[14] Նույն տեղում, էջ 132:

մասին, իսկ նրան հարակից շրջաններում սկսվեցին քուրդ առաջնորդների նկատմամբ հալածանքները, մասնավորապես՝ Էլյազիգում կախաղան հանվեցին մի քանի քուրդ ղեկավարներ: Դա լցրեց դերսիմցիների համբերության բաժակը, և 1936 թ. սեպտեմբերին Դերսիմը ապստամբեց:

1936 թ. նոյեմբերի 1-ին ԹԱՄԺ-ում իր ելույթում Մուսթաֆա Քեմալը կոչ արեց վերջնականապես լուծել Դերսիմի հարցը[15]: Այդ գործը հեշտացնելու համար Մուսթաֆա Քեմալը վարչական նոր ձևափոխումներ կատարեց. Դերսիմի կենտրոնական մասը անջատվեց որպես առանձին վիլայեթ, իսկ մյուս մասերի հիման վրա ստեղծվեցին Էլյազիգ և Բինգյոլ վիլայեթները: Այս երեքը միասին կազմեցին չորրորդ գեներալ-տեսչությունը, որի գեներալ-տեսուչը դարձավ Աբդուլլահ Ալփդողանը: Չորրորդ գեներալ-տեսչությունն էր Էլյազիգը: Որպես պատրվակ՝ Ալփդողանը քրդերից պահանջեց հանձնել 20 հազար հրացան: Սայիդ Ռեզան, հասկանալով, որ դա ընդամենը պատրվակ է, և թուրքերն ամեն դեպքում հարձակվելու են, ցանկացավ թուրքերի դեմ պայքարում միավորել քրդական ցեղերը՝ բայց անհաջող: Նրան հաջողվեց միավորել ընդամենը յոթ-ութ ցեղ. Օվաջըքի, Քոջանի, Թեքմանի քրդերը չմիացան և հայտարարեցին իրենց չեզոքության մասին, իսկ Խոզաթի ցեղերի մի մասն անցավ թուրքերի կողմը: 1936 թ. աշնանը թուրքական հետևակային մեկ դիվիզիա և ժանդարմական մեկ գունդ ինքնաթիռների աջակցությամբ սկսեց հարձակումը, սակայն վերահաս ձմռան պատճառով այն դադարեցվեց:

1936 թ. դեկտեմբերի 7-ից մինչև 1937 թ. հունվարի 27-ը Անկարայում տեղի ունեցավ Թուրքիայի չորս գեներալ-տեսչությունների տեսուչների խորհրդակցությունը՝ ներքին գործերի մինիստր Շյուքրյու Քայայի նախագահությամբ, որտեղ գլխավոր հարցերի շարքում էր Դերսիմի խնդիրը[16]: Սայիդ Ռեզան փորձում էր հարցը լուծել խաղաղ բանակցությունների միջոցով և իր կողմից որպես բանագնաց ուղարկեց իր որդուն: Սակայն թուրքերը միտք անգամ չունեին բանակցելու և նրա որդուն սպանեցին: 1937 թ. հունիսին սկսվեց ապստամբությունը: Ապստամբների թիվը հասավ 30000: Թուրքերն ուղարկեցին մեկ կորպուս: 1937 թ. ամռանը ռազմական գործողություններն աննախադեպ ծավալների հասան: Քրդերը ցրվեցին անտառոտ լեռներում, սակայն թուրքերը հրկիզում էին անտառները: Սայիդ Ռեզան որոշեց նահանջել դեպի Իրաք, սակայն թուրքական ինքնաթիռները նրան հայտնաբերեցին Ուզուն-Մեշայի մոտ: 1937 թ. ամռան վերջին Քոզլուջա կոչվող վայրում թուրքերը կտրեցին քրդերի նահանջի ուղին: Մարտում քրդերը շատ կորուստներ տվեցին և ցրվեցին լեռներում, իսկ Սայիդ Ռեզան վիրավորվեց:

1937 թ. հուլիսին Թուրքիան, Իրանը և Իրաքը կնքեցին Սաադաբադի պայմանագիրը, որն ուղղված էր նաև քրդերի դեմ:Կողմերը պարտավորվում էին իրենց տարածքներում արգելել այն զինված խմբերի,կազմակերպությունների գործունեությունը,որոնք ուղ-ղված էին պայմանագրի մյուս անդամ պետությունների դեմ:Իրենց ապահովելով դիվանագիտական ճակատում՝թուրքերը ձեռնամուխ եղան Դերսիմի վերջնական

[15] **Мустафа Кемаль.,** *Речи и статьи, М., 1964, с. 332.*
[16] **Гасратян М. А.,** նշվ. աշխ., էջ 162:

ճնշմանը: Գեներալ Ալփդողանը նամակով հայտնեց Սայիդ Ռեզային, որ համաձայն է կրակի դադարեցմանը: Հավատալով դրան՝ 1937 թ. սեպտեմբերի 5-ին Սայիդ Ռեզան եկավ Երզնկա՝ բանակցություններ վարելու, սակայն ձերբակալվեց: 1937 թ. նոյեմբերի 10-ին Էյյազիգի ռազմական տրիբունալը Սայիդ Ռեզային և նրա 11 կողմնակիցներին դատապարտեց մահվան, որն ի կատար ածվեց նոյեմբերի 18-ին[17]: Սակայն ապստամբությունը շարունակվեց հաջորդ՝ 1938 թ.: Լեռներում ցրված ապստամբները ծանր հարվածներ էին հասցնում թուրքական զորքերին, որոնք ստիպված էին պահել ավելի շատ զորք, քան նախորդ տարի: Ընդհանուր առմամբ, Դերսիմի ապստամբության ժամանակ թուրքական զորքերի պատժիչ արշավանքի ժամանակ զոհվեց մոտ 70000 խաղաղ բնակիչ:

Դերսիմի ապստամբությունը դատապարտված էր պարտության, քանի որ անկազմակերպ էր, դրան չէին աջակցում ոչ միայն դերսիմցի և զազա քրդերը, այլև Դերսիմի քրդերի զգալի մասը: Այն կապեր չհաստատեց «Հոյբունի» հետ, որի հետևանքով մնաց որպես ցեղային ապստամբություն, որը չուներ քաղաքական ծրագիր: 1920-1930-ական թթ. ապստամբությունները կարևոր քայլ էին քրդական քաղաքական մտքի էվոլյուցիայի ճանապարհին: Եթե 1919-1920 թթ. քրդերի մեծ մասը իրեն չէր պատկերացնում Թուրքիայի կազմից դուրս և ամենաշատը ձգտում էր ինքնավարության, ապա քեմալականների ճնշման տակ առաջ եկավ նրանց ազգային ինքնագիտակցությունը: Եթե մինչ այդ քուրդ շեյխերն ու աղաներն ապստամբում էին սոսկ ֆեոդալի ոտնահարված իրավունքները վերականգնելու կամ իրենց ավատական իշխանությունը կիսանկախ կամ անկախ դարձնելու համար, ապա 1920-1930 թթ. ապստամբությունների միակ նպատակն էր թուրքական լծից ազատվելը և անկախ Քուրդիստանի ստեղծումը: Ընդգծենք, որ այստեղ մեծ էր հայ քաղաքական ուժերի, մասնավորապես ՀՅԴ-ի դերը:

Սակայն 1920-1930 թթ. քրդական ապստամբությունները դատապարտված էին պարտության՝ մի քանի պատճառներով: 1) Առաջին համաշխարհային պատերազմից հետո Օսմանյան կայսրության կազմի մեջ եղած Քուրդիստանը բաժանվեց երեք մասերի, որոնցից երկուսն անցան Անգլիային և Ֆրանսիային: Այսպիսով խորացավ քաղաքական մեկուսացումը, ջլատվեց զինական ուժը: 2) Քրդերի մեծ մասի համար ազգային ինքնագիտակցությունը մնաց ցեղային մակարդակի վրա. մի վայրում ծագած ապստամբությունը աջակցություն չէր գտնում ուրիշ վայրերի ցեղերից, հաճախ էլ ապստամբած ցեղին թշնամի ցեղը միանում էր թուրքական զորքերին: 3) Քաղաքներում բնակվող քրդերը, որոնք հիմնականում վաճառականներ և արհեստավորներ էին, շատ դեպքերում չէին մասնակցում ապստամբություններին՝ վախենալով կողոպուտից և բռնություններից: 4) Չնայած քաղաքական կուսակցությունների ձևավորմանը, ազգային ինքնագիտակցությունն անհամեմատ թույլ էր, քան թուրքերինը, և քաղաքական կազմակերպությունները քրդական իրականության մեջ ուժ չէին ներկայացնում, իրական ուժը աշիրեթապետերն ու շեյխերն էին, որոնց համար առաջնայինը իրենց շահն էր, որի պատճառով էլ շատ

[17] *История Курдистана, с. 311.*

էր տարածված դավաճանությունը: 5) Թուրքական զորքերը քրդական վատ կազմակերպված, զինված ջոկատների նկատմամբ թվական և տեխնիկական գերազանցություն ունեին: 6) Իրանը, Ֆրանսիան, ԽՍՀՄ-ը, Մեծ Բրիտանիան չէին ցանկանում անկախ Քուրդիստանի ստեղծումը, քանի որ վախենում էին կորցնել իրենց քրդաբնակ շրջանները, իսկ ԽՍՀՄ-ը դրա մեջ տեսնում էր Անտանտի դավադրությունն իր հանդեպ և վախենում էր, որ նորաստեղծ Քուրդիստանում կուժեղանա ՀՅ Դաշնակցության դերը՝ իր կազմի մեջ գտնվող Խորհրդային Հայաստանի սահման-ների մոտ:

## КУРДСКОЕ НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОЕ ДВИЖЕНИЕ В КЕМАЛИСТСКОЙ ТУРЦИИ В 1920-1930 ГГ.

САИЯН А. С.

**Резюме**

После подавления восстания 1925 года власти кемалистской Турции усилили карательный режим в восточных провинциях страны. В 1926 году курдские племена сосредоточили свои силы на горе Арарат. Началось новое восстание, которое возглавили предводитель племени джелали Берхо, Исхан Нури паша и Хсге Телли. В августе 1927 г. в Ливане была создана курдская полити-ческая организация “Хойбун”, сотрудничавшая с АРФ Дашнакцу-тюн. “Хойбун” признала права армян на Западную Армению, а АРФ Дашнакцутюн защищала права курдов на международной а-рене. В 1927-1930 гг. курдские повстанцы развернули военные дей-ствия в северо-восточных провинциях Турции. В августе 1930 года Вооруженные силы СССР перешли реку Аракс и вместе с войска-ми кемалистской Турции, 5 сентября 1930 г. перешедшими в кон-трнаступление, приняли участие в подавлении восстания курдов на горе Арарат. В июне 1937 г. началось Дерсимское восстание, по-давленное жестокими карательными действиями турецких войск с применением авиации. Руководитель Дерсимского восстания Саид Реза и его 11 сторонников были приговорены к смертной казни Элязигским военным трибуналом 10 ноября 1937 года. Таким образом, курдское национально-освободительное движение 1920-1930-х годов в кемалистской Турции было подавлено. Причиной тому были разобщенность курдских племен и низкий уровень их национального самосознания. Немаловажную роль сыграло отсут-ствие внешней поддержки, ибо соседние с кемалистской Турцией страны были заинтересованы в нейтрализации курдского дви-жения.